ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 մարտի 2024 թվականի № 128-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ «ՍՈԼԱԿԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆԱՅԻՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՆ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒՅԹՆ ԱՆՑԿԱՑՆՈՂ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի փետրվարի 3-ի № 129-Ն որոշման հավելվածի 9-րդ կետի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2024 թվականի հունվարի 10-ի № 11-Ա որոշումն՝ **որոշում եմ.**

1. Ստեղծել ***2024 թվականի մարտի 20-ին ժամը 11:00-ին*** Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի ենթակայության «Սոլակի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի թափուր պաշտոնն զբաղեցնելու համար մրցույթն անցկացնող մրցութային հանձնաժողով հետևյալ կազմով.

1) ***Հայկ Մկրտչյան*** - Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի տեղակալ,

2) ***Անուշ Ղահրամանյան*** - Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչության պետ,

3) ***Վահագն Նազլոյան*** - Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչության պետ,

4) ***Մանյա Միհիթարյան*** - Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության ֆինանսատնտեսագիտական վարչության հաշվապահական հաշվառման բաժնի պետ - գլխավոր հաշվապահ,

5) ***Գրիգորիս Օտյան*** - Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության «Կոտայք» մասնաճյուղի տնօրեն,

6) ***Մարգարիտա Մարգարյան*** - Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմի սոցիալական հարցերի վարչության գլխավոր մասնագետ,

7) ***Արտակ Գրիգորյան*** - Հայկական հոգեբուժական ասոցիացիայի անդամ:

2. Հանձնաժողովի նախագահ նշանակել *Հայկ Մկրտչյանին*, քարտուղար՝ *Վահագն Նազլոյանին*:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ա. ՍԱՀԱԿՅԱՆ

2024 թվականի մարտի 19
ք. Հրազդան